

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՐՅԱՆ ԵՎ ԱՐՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

(2012 – 2017թթ.)

I. Ներածություն

1. Փոխներարկումային բժշկական օգնությունն ազգային առողջապահության համակարգի կարևորագույն մասն է և անուղղակի կերպով արտահայտում է առողջապահության ողջ համակարգի որակն ու անվտանգությունը, քանի որ փոխներարկումային բուժօգնություն իրականացվում է համակարգի գրեթե բոլոր ծառայություններում (վիրաբուժական, վերակենդանացման, մանկաբարձա-գինեկոլոգիական, ուռուցքաբանական և այլն):

2. Արյան դոնորության և արյան բաղադրամասերի փոխներարկման խնդիրները բնակչության առողջության պահպանման կարևոր գործոններից են: Այն հատկապես կարևորվում է բնական աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ, երբ անհրաժեշտություն է առաջանում արյան փոխներարկման զանգվածային կիրառման: Խնդիրը կարևորվում է նաև մարդկանց կյանքի և առողջության անվտանգության պահպանման տեսանկյունից, քանի որ վարակված արյան փոխներարկումը կարող է պատճառ հանդիսանալ տարբեր վարակային հիվանդությունների զանգվածային տարածման համար: 1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո առաջին երկու օրվա ընթացքում Հայաստանի բուժհաստատություններին է տրամադրվել մոտ 10000 միավոր փոխներարկման համար պիտանի արյան բաղադրամաս: Այդ քանակը հնարավոր եղավ ապահովել ի հաշիվ Արյունաբանական կենտրոնում և Արյան փոխներարկման կայաններում (բացի Գյումրիի, Վանաձորի և Ստեփանավանի արյան փոխներարկման կայանների, որոնք երկրաշարժի ժամանակ շարքից դուրս էին եկել, ընդ որում Վանաձորի և Ստեփանավանի արյան փոխներարկման կայանները հիմնովին ավիրվել էին) պահեստավորված և հավաքագրված դոնորական արյան բաղադրամասերի և դոնորական արյան

հավաքագրման համար անհրաժեշտ միջոցների և այդ արյունը թեստավորելու համար նյութերի: Բացի այդ Հայաստանի Հանրապետության տարածքում տեղաբաշխված արտակարգ իրավիճակների համար նախատեսված պահեստներում առկա էին մեծ քանակությամբ դոնորական արյան հավաքագրման համար անհրաժեշտ միջոցներ և թեստավորման համար նյութեր: Արյան անվտանգության հարցերի կանոնակարգումը տարբեր երկրներում իրականացվում է ազգային օրենսդրության միջոցով: Եվրոմիության երկրների՝ արյան անվտանգության հարցերի վերաբերյալ օրենսդրության հիմքն է հանդիսանում Եվրոխորհրդի կողմից հաստատված ընդհանուր օրենսդրությունը: Սույն Ծրագրի ընդունումը բխում է արյան փոխներակման անվտանգության ապահովման հիմնախնդրից և հանդիսանում է ազգային անվտանգության բաղադրիչներից մեկը:

II. Արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության հիմնախնդրի նկարագիրը

3. Արյան և արյան բաղադրամասերի դոնորության վերաբերյալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) գերակա նպատակն է «Կամավոր անհատույց դոնորության 100% նվաճում» շարունակական խնդիրը:

4. Աշխարհի տարբեր երկրներում արյան հավաքագրումը խիստ անհավասար է: Ամբողջ աշխարհում տարեկան հավաքագրվում է մոտ 100 մլն միավոր դոնորական արյուն, որից մոտ 30% -ը հավաքագրվում է միջին և թույլ զարգացած երկրներում:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ երկրներում բնակվում են երկրագնդի բնակչության ավելի քան 80 %, պարզ է դառնում, որ դրանք արյան ապահովվածությամբ զգալի զիջում են զարգացած երկրներին: Այսպես՝ 44 զարգացած երկրներում, որոնց բնակչությունը կազմում է աշխարհի բնակչության 16 %, հավաքագրվում է ամբողջ աշխարհում հավաքագրվող արյան քանակի 49%, իսկ մոտավորապես նույն քանակի բնակչությամբ (15%) թույլ զարգացած 47 երկրներում հավաքագրվում է ընդամենը 4%: Այսպիսով՝ զարգացած երկրներում արյան բաղադրամասերով մեկ բնակչի ապահովումը 10 անգամ գերազանցում է թույլ զարգացած երկրներում արյան բաղադրամասերով մեկ բնակչի ապահովման ցուցանիշը:

6. Զարգացող շատ երկրներում հավաքագրված արյան 50-80%-ը օգտագործվում է մանկաբարձության մեջ կրիտիկական իրավիճակներում: Համաշխարհային մաշտաբով յուրաքանչյուր տարի ավելի քան 530 000 կին մահանում է հղիության ընթացքում, ծննդաբերության ժամանակ կամ հետծննդաբերության շրջանում, սրանցից 99% -ը՝ թույլ զարգացած երկրներում:

7. Ամբողջ աշխարհում տարեկան ավելի քան 100 մլն մարդ ստանում է վնասվածքներ, և ավելի քան 5 մլն մարդ մահանում է վնասվածքներից և բռնությունից: Ճանապարհատրանսպորտյին պատահարները 5-29 տարեկանների մահվան և լուրջ վնասվածքների երկրորդ գլխավոր պատճառն են: Ճիշտ ժամանակին արյան փոխներարկման ապահովումը մինիմալի է հասցնում վնասվածքներով հիվանդների մահվան և հաշմանդամության հնարավորությունը:

8. Ըստ ԱՀԿ-ի և Դոնորների միջազգային ասոցիացիայի տվյալների, արյան բաղադրամասերով և պատրաստուկներով երկրի ինքնաապահովման համար անհրաժեշտ է, որ երկրի բնակչության առնվազն 2-5 %-ը ընդգրկվի արյան դոնորության գործընթացում: Արյունը հավաքագրվում է ինչպես կամավոր անհատույց, այնպես էլ փոխհատուցվող դոնորներից և հիվանդների հարազատներից: Դոնորական արյան վարակային անվտանգության կարևորագույն երաշխիքներից մեկը դոնորների ճիշտ ընտրությունն է: Առավել անվտանգ խումբ են համարվում կամավոր անհատույց դոնորները: Նրանք են համարվում ցածր ռիսկի խմբի դոնորներ, որովհետև պատճառ չունեն բժշկից թաքցնել իրենց վարքագծի կամ առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ:

9. Տարբեր երկրներում արյան դոնորների կազմում անհատույց, հիվանդների հարազատների և փոխհատուցվող խմբերի տոկոսը տարբեր է: Այսպես՝ զարգացած երկրներում դոնորական արյան 94%-ը հավաքագրվում է անհատույց դոնորներից: 39 զարգացած երկրներում այն կազմում է 100%, ընդ որում երկու և ավելի անգամ արյուն հանձնած անձինք կազմում են 89%: Զարգացող և թույլ զարգացած երկրներում այս ցուցանիշը տատանվում է 0-50%-ի սահմաններում: Ընդ որում, աշխարհի 71 երկրներում բացակայում են պարբերաբար արյուն հանձնող անհատույց դոնորներ:

10. Արյան անվտանգության քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝ հավասարություն, մարդու արժանապատվության պաշտպանություն, առողջության տվյալների գաղտնիություն, առողջության պահպանում, կամավոր անհատույց և անանուն դոնորություն, դոնորության հետ կապված պատճառաբանված ծախսերի փոխհատուցում, ինքնաապահովում (տվյալ երկրի մասշտաբով), արյան և դրա բաղադրամասերի արդյունավետ օգտագործում:

11. Փոխներարկումային բժշկական օգնության հիմնական նախապայմանն է հանդիսանում դոնորական արյան անվտանգության (այդ թվում վարակային), ապահովումը: Արյունը՝ լինելով մարդու կենսունակությունը ապահովող հյուսվածք, միաժամանակ հանդիսանում է մի շարք վարակների հարուցիչների համար կենսաբանական բարենպաստ

միջավայր: Պահպանելով արյան կենսունակությունը, զուգահեռ պահպանվում է նաև վարակների հարուցիչների կենսունակությունը: Անգամ բժշկագիտության զարգացման արդի փուլում ոչ միշտ է հնարավոր լինում մարդու արյան մեջ հայտնաբերել գաղտնի շրջանում գտնվող վարակային հիվանդությունների հարուցիչները: Հետևապես, միշտ առկա է դոնորական արյան միջոցով փոխանցվող վարակի վտանգը: Ներկայում հայտնի է արյան միջոցով փոխանցվող (տրանսմիսիվ) մոտ 30 վարակ: Դրանց թվին են պատկանում մարդու իմունային անբավարարության (այսուհետ՝ ՄԻԱՎ), հեպատիտներ Բ-ի և Ց-ի հարուցիչները և այլն: Դոնորական արյունը պարտադիր հետազոտվում է ՄԻԱՎ-ի վարակի, հեպատիտների և սիֆիլիսի վարակների նկատմամբ: Լրացուցիչ կատարվում են հետազոտություններ՝ տվյալ երկրում տարածված տրանսմիսիվ այլ վարակների նկատմամբ: Դոնորական արյան վարակային անվտանգության բարձրացմանը նպաստում է հետազոտությունների պարտադիր ցանկի ընդլայնումը, հետազոտությունների նոր մեթոդների ներդրումը և դրանց ավտոմատացումը՝ մարդկային գործոնի հետևանքով սխալների հավանականության նվազեցման նպատակով: Վարակային անվտանգության երաշխիք է հանդիսանում նաև պլազմայի կարանտինացումը և վիրուսինակտիվացումը, ինչն առավել կարևորվում է արյան պատրաստուկների արտադրության ժամանակ: Արյան որակի պահպանման համար կարևորվում է արյան հավաքագրման, բաղադրամասերի անջատման, դրանց պահպանման և տեղափոխման բոլոր պահանջների ապահովումը: Այս գործընթացում էական է ջերմային ռեժիմի պահպանումը բոլոր փուլերում: Այսպես՝ բաղադրամասերի անջատումից հետո մեծ նշանակություն ունեն պլազմայի արագ և ճիշտ սառեցումը և հետագա հալեցումը, որոնք հանդիսանում են պլազմայում պարունակվող բոլոր կենսաբանական նյութերի (օրինակ՝ հակաթրոմբին III, մակարդման VIII և IX գործոններ) կենսունակության պահպանման երաշխիքը: Արյան կենսունակության ապահովման համար անհրաժեշտ է բաղադրամասերի պահպանման և տեղափոխման ջերմային ռեժիմի մշտական գրանցումը և հսկողությունը:

12. Դոնորության գործընթացի, արյան պաշարների առկայության, խոտանի նվազեցման, վարակակիր դոնորների վաղ հայտնաբերման և անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման խնդրում կարևոր նշանակություն ունի համակարգչային տեղեկատվական ցանցի առկայությունը, որի ստեղծումը Հայաստանի նման փոքր երկրի համար ոչ միայն իրատեսական, այլև կենսականորեն անհրաժեշտ է:


III. Արյան ծառայության ներկա իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում

13. Հայաստանի ազգաբնակչությունը 3 262 600 է, որի 35%-ը բնակվում է մայրաքաղաքում: Հանրապետությունում գործում են թվով 127 բուժհաստատություններ, որոնք իրականացնում են հիվանդանոցային բուժօգնություն: Հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների մահճակալների թիվը 12068 է, որոից վիրաբուժական և մանկաբարձագինեկոլոգիական մահճակալները կազմում են 4475 -ը:

14. Հայաստանի Հանրապետությունում արյան ծառայության աշխատանքները կանոնակարգվում են Առողջապահության նախարարության կողմից հաստատված չափորոշչով, որն ամեն տարի լրամշակվում և հաստատվում է: Արյան ծառայության և փոխներարկումային բժշկական օգնության հետ կապված հարաբերությունների կանոնակարգման, իրավաբանական դաշտի ձևավորման համար Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Մարդու արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկման մասին» օրենքը:


15. Ներկայում Հայաստանի Հանրապետությունում արյունը հավաքագրվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Հ.Ռ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնում», Հայաստանի Հանրապետության մարզերի թվով 5 արյան փոխներարկման կայաններում, Երևանի Հիվանդանոցային հաստատությունների կազմում գործող 10 և մարզային հիվանդանոցների՝ 6 արյան փոխներարկման բաժանմունքներում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինվորական հոսպիտալի արյան փոխներարկման բաժանմունքում և «Վիոլա» Արյան բանկում:

Նկար 1. ՀՀ Արյան ծառայության կառուցվածքը



16. Հայաստանում վերջին տարիներին արձանագրվում է հավաքագրվող արյան քանակի աճ /նկ. 2/:

Նկար 2. Արյունատվությունների թիվը ըստ տարիների



17. Հանրապետության մարզերի արյան ծառայության կարիքների գնահատման համար հիմք են ծառայել գործող հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների և դրանցում ծավալված մահճակալների թվերը: Այն ունի հետևյալ պատկերը առ 01.01.2011թ.

ՀՀ	Տարածաշրջան	Բնակչություն /հազ. մարդ/	Հիվանդանոցների թիվը	Մահճակալների թիվը	Հավաքագրված արյան բաղադրամասերի քանակը	Հավաքագրված արյան բաղադրամասերի քանակը 1000 բնակչի հաշվարկով
1	Երևան	1121.9	48	7304	19186	17,18
2	Շիրակ	282.0	18	873	980	3,48
3	Կոտայք	282.1	10	665	467	1,66
4	Լոռի	282.1	11	550	1166	4,14
5	Սյունիք	152.9	7	435	512	3,35
6	Արմավիր	2845.8	4	335	872	3,07
7	Արարատ	280.4	7	563	135	0,48
8	Վայոց Ձոր	56.0	3	95	10	0,18
9	Տավուշ	134.6	6	270	128	0,95
10	Գեղարքունիք	242.4	7	770	0	0
11	Արագածոտն	142.4	6	208	0	0
Ընդամենը		3.262.6	127	12068	23456	7,22

18. Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանի տարբեր մարզերում արյան հավաքագրումն անհավասար է: Միջինում, հանրապետությունում 1000 բնակչի հաշվարկով, արյան հավաքագրման ցուցանիշը կազմում է 7,22: Այս ցուցանիշը ըստ մարզերի տատանվում է 0,18-ից Վայոց Ձորում-17,18 Երևանում: Մայրաքաղաքում

հավաքագրվում է հանրապետությունում հավաքագրված արյան 83.5 %, մինչդեռ մայրաքաղաքում բնակվում են բնակչության 35%: Երևանի բարձր ցուցանիշը պայմանավորված է այն հանգամանքով, որ մեծ վիրահատությունները, հատկապես սրտի, ծննդաբերությունների մեծ տոկոսը և արյան համակարգի հիվանդություններով տառապող հիվանդների բուժումը իրականացվում է Երևանի բուժհաստատություններում: Այս դեպքերում է, որ պահանջվում են մեծ քանակի արյան բաղադրամասեր: Խոշոր վթարների ժամանակ՝ ինչպես տրանսպորտային, այնպես էլ տեխնոգեն, երբ կտրուկ ավելանում է արյան բաղադրամասերի պահանջարկը, անհրաժեշտ քանակի արյան բաղադրամասերի ապահովման խնդիր է առաջանում, հատկապես մարզերում: Այս պայմաններում անհրաժեշտություն է առաջանում այլ մարզերից արյան բաղադրամասեր հասցնել:

19. Երևանում գործող Արյան ծառայության ստորաբաժանումները սպասարկում են հիմնականում Երևանի բժշկական կազմակերպությունները և մասամբ՝ Կոտայքի մարզի Աբովյանի, Եղվարդի, Արարատի մարզի՝ Մասիսի, Արագածոտնի մարզի՝ Աշտարակի և Ապարանի բուժհաստատությունները: Անհրաժեշտության դեպքում, արյան բաղադրամասեր են տրամադրվում նաև մյուս մարզերին: Արյունաբանական կենտրոնում և հիվանդանոցային 10 ԱՓԲ-ներում տարեկան իրականացվում է մոտ 10 000 արյունատվություն: Արտակարգ իրավիճակների համար Երևանի բոլոր արյան ծառայությունների կողմից պահեստավորված արյան բաղադրամասերի քանակը կազմում է 3000 միավոր:

20. Շիրակի մարզում գործում է Գյումրիի արյան փոխներարկման կայանը, որտեղ տարեկան իրականացվում է մոտ 500 արյունատվություն: Կայանի տարածքը վերանորոգված է: Այն ապահովում է ՀՀ Շիրակի մարզի արյան բաղադրամասերի պահանջարկը՝ «Շիրակի մարզային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի, Գյումրիի «Գյուլբենկյան», «Ճերմակ», «Ավստրիական», «Սամարիթեր» բժշկական կենտրոնների, Ուռուցքաբանական կենտրոնի, Շտապ բուժօգնության, Զինվորական հոսպիտալի, Ծննդատան, ինչպես նաև Աշոցքի, Արթիկի բժշկական կենտրոնների և Մոր և մանկան առողջության կենտրոնի, Ախուրյանի Մոր և մանկան առողջության կենտրոնի, Մարալիկի առողջության կենտրոնի, արյան բաղադրամասերի պահանջարկը՝ համաձայն կնքված պայմանագրերի: Արտակարգ իրավիճակների համար պահեստավորված է մոտ 300 միավոր արյան բաղադրամաս:

21. Կոտայքի մարզում գործում է Հրազդանի արյան փոխներարկման կայանը, որտեղ տարեկան իրականացվում է մոտ 250 արյունատվություն: Կայանի տարածքը մասամբ

վերանորոգված է: Հրազդանի արյան փոխներարկման կայանի տեղակայումը և շենքային պայմանները լիովին բավարարում են արտակարգ իրավիճակներում, ներառյալ պատերազմական, Արյունաբանական կենտրոնի կրկնօրինակի ստեղծման համար: Հետևաբար, հաշվի առնելով այդ հանգամանքը, անհրաժեշտ է իրականացնել հիմնարար վերանորոգման աշխատանքներ: Կայանն ապահովում է արյան բաղադրամասերով ՀՀ Կոտայքի մարզի՝ բոլոր և ՀՀ Գեղարքունիքի մարզի որոշ (Սևան, Մարտունի, Գավառ, Ճամբարակ) բուժհաստատությունները:

22. Լոռու մարզում գործում են Վանաձորի արյան փոխներարկման կայանը, որտեղ տարեկան իրականացվում է մոտ 600 արյունատվություն և Ստեփանավանի արյան փոխներարկման բաժանմունքը: Վանաձորի արյան փոխներարկման կայանը տեղակայված է առանձին՝ մեկ հարկանի շենքում Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիրի տարածքում և ունի մասնակի վերանորոգման կարիք: Կայանն ապահովում է արյան բաղադրամասերով Լոռու մարզի բոլոր բուժհաստատությունները:

23. Սյունիքի մարզում գործում են Գորիսի արյան փոխներարկման կայանը, որտեղ տարեկան իրականացվում է 250-300 արյունատվություն: Կայանի տարածքը մասնակի վերանորոգված է: Այն ապահովում է արյան բաղադրամասերով Սյունիքի մարզի բոլոր բուժհաստատություններին:

24. Արմավիրի մարզում գործում են Արմավիրի արյան փոխներարկման կայանը, որտեղ տարեկան իրականացվում է 450-500 արյունատվություն: Կայանը տեղակայված է առանձին երկհարկանի շենքում, որը գտնվում է անմխիթար վիճակում և կապիտալ վերանորոգման կարիք ունի: Ներկայում, շենքային անմխիթար վիճակի պատճառով, արյան հավաքագրումը և պաշարումն իրականացվում է Արմավիրի հիվանդանոցի տարածքում գտնվող առանձին հարմարեցված փայտյա տնակում: Արմավիրի արյան փոխներարկման կայանն ապահովում է արյան բաղադրամասերով Արմավիրի մարզի բոլոր բուժհաստատություններին:

25. Արարատի մարզում գործում է Արտաշատի արյան փոխներարկման բաժանմունքը, որը սպասարկում է տարածաշրջանի բնակչությանը և մասամբ՝ մարզի մյուս բժշկական կազմակերպություններին: Մարզի այն բժշկական կազմակերպությունները, որոնք գտնվում են Երևանին մոտ, օգտվում են Երևանի արյան ծառայություններից:

26. Վայոց Ձորի մարզում գործում է Եղեգնաձորի հիվանդանոցի արյան փոխներարկման բաժանմունքը, որը սպասարկում է մարզի բոլոր բուժհաստատություններին:

27. Տավուշի մարզում գործում են Նոյեմբերյանի, Բերդի, Դիլիջանի հիվանդանոցների արյան փոխներարկման բաժանմունքները, որոնք սպասարկում են այդ տարածաշրջանների բուժհաստատություններին:

28. Հանրապետության երկու՝ ՀՀ Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում արյան ծառայության ստորաբաժանումները բացակայում են:

29. Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքից ելնելով, արյան բաղադրամասերի հասանելիության ապահովման համար, առաջարկվում է Արյան ծառայության արդիականացում, որի էությունը հետևյալն է՝

1) Հայաստանում «արյան հասանելիության ծածկույթ» հասկացության ներդրում, ինչի նպատակն է Հայաստանի յուրաքանչյուր բուժհաստատության ապահովումը արյան բաղադրամասերով հնարավորինս մոտիկ և հարմար տեղակայված (ժամանակի և աշխարհագրական տեսակետից) Արյան ծառայության ստորաբաժանումից:

2) ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ և ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքներում ստեղծել Արյան ծառայության ստորաբաժանումներ, որոնք կապահովեն նշված մարզերի բուժհաստատությունների արյան բաղադրամասերի պահանջարկը:




3) Դոնորական արյան անվտանգության բարձրացման, հավաքագրված պաշարների ուղղորդում, օգտագործման, խոտանի նվազեցման, վարակակիր անձանց վաղ հայտնաբերման, հետփոխներարկումային բարդությունների գրանցման ու վերահսկման, ինչպես նաև արյան բաղադրամասերի շարժի բոլոր փուլերում (սկսած դոնորի

ընտրությունից մինչև փոխներարկումը ներառյալ) հսկողություն սահմանելու համար կարևոր նշանակություն ունի **արյան դոնորների ռեեստրը** (միասնական տեղեկատվական համակարգչային ցանց): Ռեեստրի ստեղծումը կապ կհաստատի դոնորական արյան հավաքագրում և փոխներարկում իրականացնող հաստատությունների և ստորաբաժանումների, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի», մաշկավեներաբանական, տուբերկուլյոզի դեմ պայքար իրականացնող և հակահամաճարակային կառույցների միջև:

4) Արյան ծառայության ստորաբաժանումները անհրաժեշտ է ապահովել փոխադրամիջոցներով և արյան բաղադրամասերի տեղափոխման համար հատուկ ջերմային ռեժիմը պահպանող արկղերով (կոնտեյներներով), ինչը հնարավորություն կընձեռնի արյան բաղադրամասերը հնարավորինս արագ հասցնել հասցեատերերին՝ պահպանելով արյան բաղադրամասերի որակը: Այս պարագայում կվերանա արյան բաղադրամասերի տեղափոխման հարցը հիվանդի հարազատների կողմից:

30. Հանրապետությունում արյունը հավաքագրվում է ինչպես կամավոր անվարձահատույց, այնպես էլ փոխհատուցվող դոնորներից և հիվանդների հարազատներից (նկար 3):

Նկար 3. **Դոնորների կազմը (%)**



31. Տարեցտարի դոնորների կազմում արձանագրվում են որոշակի փոփոխություններ: Նկատվում է հիվանդների հարազատ հանդիսացող դոնորների թվի նվազում և փոխհատուցվող դոնորների քանակի աճ: Ներկայում հանրապետության ծննդօգնություն իրականացնող ստորաբաժանումներում հարազատներից արյուն չի հավաքագրվում, մինչդեռ՝ ըստ ՀԱԿ-ի տվյալների, զարգացող շատ երկրներում հավաքագրված արյան 50-80%-ը օգտագործվում է մանկաբարձության կրիտիկական իրավիճակներում: Առկա է անհատույց դոնորների քանակի աճ, սակայն այն դեռևս զգալի չէ: Հայաստանի «25 ակումբ» հասարակական կազմակերպության հետ համատեղ տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների շրջանում իրականացնում են քարոզչական աշխատանքներ, ինչի շնորհիվ վերջին տարիներին ուսանողները իրականացրել են

անհատույց արյունատվության բազմաթիվ ակցիաներ: Նմանատիպ ակցիաներ են իրականացրել նաև տարբեր կուսակցությունների երիտասարդական կառույցների ներկայացուցիչները: Պարբերաբար տպագրվում են արյան դոնորությանը վերաբերվող տարբեր հուշաթերթիկներ, անհատույց արյունատվության ակցիաները լուսաբանվում են զանգվածային լրատվամիջոցներով:

32. Անհատույց կամավոր դոնորներից հավաքագրվող արյան քանակների ավելացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել լուրջ քարոզչական աշխատանքներ, ներգրավելով հասարակական կազմակերպություններին: Անհրաժեշտ է մշակել տարբեր քարոզչական ծրագրեր արյան դոնորության, հատկապես անհատույց դոնորության կարևորության վերաբերյալ՝ դպրոցներում, բուհերում իրականացնելու համար, նկարահանել տեսահոլովակներ և կազմակերպել ռադիոհաղորդումներ, որտեղ՝ կարևորելով արյան փոխներարկման դերը բժշկության մեջ, պետք է ընդգծվի այն գաղափարը, որ անհատույց դոնորությունը ազգային պատվի և սեփական արյունը նվիրաբերելու մարդասիրական քայլ է, որը պետք է շարունակաբար քարոզվի, լուսաբանվի մեր հասարակության մեջ և խրախուսվի վերջինիս կողմից:

33. Հայաստանի Հանրապետության արյան ծառայության ստորաբաժանումների կադրային հագեցվածությունը հետևյալն է.

Բժիշկներ	Միջին բուժանձնակազմ	Կրտսեր բուժանձնակազմ	Ինժեներատեխնիկական անձնակազմ	Այլ	ԸՆԴԱՄԵՆԸ
44	70	22	6	12	154

34. Դոնորական արյան անվտանգության ապահովման նպատակով, Հայաստանի Հանրապետությունում դոնորական արյունը բացի հիմնական հետազոտություններից (ՄԻԱՎ, հեպատիտ B և C, սիֆիլիս), լրացուցիչ հետազոտվում է Հայաստանում էնդեմիկ համարվող բրուցելյոզի նկատմամբ, որն ընդգրկված է դոնորական արյան պարտադիր հետազոտությունների ցանկում: Դոնորական արյան վերոհիշյալ վարակային անվտանգության հետազոտություններն իրականացվում են հիմանականում կենտրոնացված: Այն իրականացվում է Երևանում՝ Արյունաբանական կենտրոնում, իսկ Հայաստանի Հանրապետության մարզերում՝ մարզային արյան փոխներարկման կայաններում:

35. Արյան վարակային անվտանգության երաշխիքներից է վիրուսինակտիվացումը, որը 2011թ. ներդրվեց Արյունաբանական կենտրոնում և իրականացվում է միայն այնտեղ:

Ներկայում վիրուսինակտիվացվում է հակառեզուս իմունոգլոբուլին պատրաստուկի արտադրման համար նախատեսված պլազման: Ներկայում, արտակարգ իրավիճակներում փոխներարկումային բուժօգնություն ցուցաբերելու համար, Արյունաբանական կենտրոնում և մարզային կայաններում ստեղծվել են փոխներարկման համար պիտանի արյան բաղադրամասերի որոշակի չնվազող անձեռնմխելի պաշարներ, սակայն դրանց քանակը բավարար չէ: Ստեղծված չեն արտակարգ իրավիճակներում արյան լրացուցիչ քանակների հավաքագրման, հետազոտման, պահպանման և տեղափոխման համար անհրաժեշտ պարագաների և նյութերի պաշարներ:

36. Արյան բաղադրամասերի փոխներարկում

Արյան բաղադրամասերի փոխներարկումը ուղեկցվում է հիվանդի համար դրական և բացասական հետևանքներով: Արյան բաղադրամասերի ճիշտ օգտագործման նպատակով մշակվել է «Արյան և արյան բաղադրամասերի փոխներարկման ցուցումները» մեթոդական ձեռնարկը, որը տրամադրվել է ծառայությունն իրականացնող բոլոր մասնագետներին:

IV. Հայաստանի Հանրապետությունում արյան բաղադրամասերի պահանջարկի մասին վերլուծություն-տեղեկատվություն:

37. Արյան բաղադրամասերի պահանջարկը կախված է ծավալված մահճակալների թվից: Տարբեր պրոֆիլի մահճակալների պահանջարկը տարբեր է: Առավել մեծ քանակներ օգտագործվում են արյունաբանական, սիրտ-անոթային վիրաբուժության, ընդհանուր վիրաբուժական, այրվածքաբանական, մանկաբարձ-գինեկոլոգիական, վերակենդանացման բաժանմունքներում:

Կից ներկայացվում է նախորդ տարիներին արյան և արյան փոխարինող հեղուկների փոխներարկումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Արյան և արյան փոխարինող հեղուկների փոխներարկումներ

	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
1. Հիվանդների թվաքանակը, որոնց կատարվել է արյան փոխարինող հեղուկների փոխներարկում	22254	22226	18051	20597	18222
2. Փախներարկված ամբողջական արյան միավորների թիվը (մեկ միավորը հավասար է մեկ	5971	2841	2176	3616	3162

փաթեթ արյան)					
3. Փախներարկված էրիթրոցիտար զանգվածի միավորների թիվը	10982	12279	7585	7517	8894
4. Փախներարկված թարմ սառեցված պլազմայի միավորների թիվը	8893	8995	9518	9338	8403
5. Փախներարկված արյան պատվաստուկների քանակը	34721	33364	14808	5665	5455
6. Հիվանդների թվաքանակը, որոնց մոտ փոխներարկումից հետո դիտվել են բարդություններ	31	59	15	12	16

38. Առողջապահության համաշխարհային կազմակերպության երաշխավորագրեր ունեցող երկրներում բնակչությանը արյան բաղադրամասերով և պատրաստուկներով պահանջի ինքնապահովման համար անհրաժեշտ է, որպեսզի բնակչության 2-5 %-ը լինեն արյան դոնորներ, մինչդեռ Հայաստանում այդ թիվը կազմում է 0,3 %:

39. Ելնելով Հայաստանի Հանրապետությունն աշխարհագրական դիրքից, բնակլիմայական պայմաններից, մեծ է գրեթե բոլոր տարերային աղետների առաջացման հավանականությունը: Բացի բնական աղետների առաջացման հավանականությունից՝ Հայաստանը զերծ չէ նաև այնպիսի ոչ պակաս վտանգավոր արտակարգ իրավիճակներից՝ իրենց աղետալի հետևանքներով, ինչպիսիք են՝ ատոմակայանի վթարը, միջազգային տեռորիզմը, պատերազմական իրադրության մեջ ներքաշվելը:

40. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ազգաբնակչության թիվը, ինչպես նաև վերոգրյալը հանրապետությունում տարեկան առնվազն պետք է իրականացվի 60000 արյունատվություն, մինչդեռ ներկայում տարեկան իրականացվում է մոտ 15000 արյունատվություն:

41. Արյան բաղադրամասերի հաշվարկն իրականացնելիս ելնում են այն սկզբունքից, որ բուժված հիվանդների **մեկ երրորդը** կարիք ունի փոխներարկումային բուժօգնության: Օգտագործվող արյան քանակն ուղղակիորեն կախված է մահճակալների ծանրաբեռնվածությունից, բաղադրամասերի նշանակումների հիմնավորվածությունից:

42. Ելնելով Հայաստանի Հանրապետությունում ծավալված մահճակալների թվից՝ ստորև ներկայացվում են արյան բաղադրամասերի հաշվարկային պահանջարկի հետևյալ տվյալները.

հհ	Ոլորտի անվանում	1 մահճակալի հաշվարկով /միավոր/			Մահճակալ. քանակը	ԷՋ (էրիթրոցիտային զանգված) /միավոր/	ԹՍՊ (թարմ սառեցված պլազմա) /միավոր/	ԹՁ (թրոմբոցիտային զանգված) /միավոր/
		ԷՋ	ԹՍՊ	ԹՁ				
1	Արյունաբանություն	21	10	15	75 շուրջօրյա և 13 ցերեկ.	1700	1000	1050
2	Այրվածքաբանություն	6	20	12 (մեկ հիվանդին որհուրդ է տրվում ոխներարկել 5-20 միավոր ԹՁ)	60	60	200	240
3	Սիրտ-անոթային վիրաբուժություն	7,5	10	1	74	2800	1950	400
4	Վիրաբուժություն (ընդգրկում է վիրաբուժական, նեյրովիրաբուժական, կրծքային վիրաբուժության, ուրոլոգիական, պրոկտոլոգիական և վնասվածքաբանական պրոֆիլի մահճակալները)	3	10	1	2700	2700	9000	900
5	Ուռուցքաբանություն	3	5	1	570	570	950	190
6	Տուբերկուլոզային	0,3	1	-	468	25	80	-
7	Ինֆեկցիոն	0,3	2	-	657	35	250	-
8	Հեմոդիալիզ	4,5	5	-	50	250	250	-
9	Մանկաբարձություն	4,5	5	-	1165	1750	1950	-
10	Գինեկոլոգիական	1,5	5	-	521	260	900	-
11	Օտոլարինգոլոգիական	0,6	0,5	-	241	50	40	-
12	Թերապևտիկ	1,5	1,5	-	2148	1100	1100	-
Ընդամենը						11300	17670	2780

43. Արտակարգ և պատերազմային իրավիճակների ժամանակ արյան ծառայության ծավալները, պլանավորվում են ելնելով լրացուցիչ ծավալվող մահճակալների հաշվարկից և մեկ տուժածի /վիրավորի/ բուժման համար անհրաժեշտ արյան բաղադրամասերի նորմատիվներից.

ՀՀ	Արյան բաղադրամասերի անվանումը	Ճառագայթային հիվանդություն	Այրվածքներ	Վնասվածքներ	Համակցված ախտահարման
1.	Էրիթրոցիտար զանգված /լ /	1,0	1,5	0,75	0,5
2.	Թրոմբոցիտային զանգված /միավոր/	2,0	-	-	-
3.	Թարմ սառեցված պլազմա /լ /	0,25	0,5	0,5	0,5
4.	Ալբումին 10 % /լ /	-	0,5	0,1	0,2

44. Ախտահարման տեղակայումից կախված արյան բաղադրամասերի պահանջարկը կազմում է՝

- 1) Գլխի շրջանի վնասվածքներ – էրիթրոցիտար զանգված – 4 միավոր, թարմ սառեցված պլազմա – 8,5 միավոր
- 2) Վերջույթների վնասվածքներ - էրիթրոցիտար զանգված – 5 միավոր, թարմ սառեցված պլազմա – 5,5 միավոր
- 3) Որովայնի շրջանի վնասվածքներ – էրիթրոցիտար զանգված – 5 միավոր, թարմ սառեցված պլազմա – 5 միավոր,
- 4) Կրծքավանդակի շրջանի վնասվածքներ - էրիթրոցիտար զանգված – 7 միավոր, թարմ սառեցված պլազմա – 4 միավոր
- 5) Ալբումինի 10% լուծույթը հիմնականում օգտագործվում է որովայնի շրջանի վնասվածքների ժամանակ:

45. Հայաստանի Հանրապետությունում արյան բաղադրամասերի իրական պահանջարկը գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- 1) Փոխներարկումային բուժօգնություն ստացած հիվանդների թվի ճշգրտում՝ ըստ պրոֆիլների,
- 2) Փոխներարկումային բուժօգնության կարիք ունեցող հիվանդների թվի ճշգրտում

V. Արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ծրագրի հիմնական սկզբունքները, նպատակները և նախատեսվող միջոցառումները՝

46. Արյան անհրաժեշտ պաշարների հավաքման մեթոդներն ու եղանակները

Հայաստանի Հանրապետությունում արյան, արյան բաղադրամասերի և արյան պատրաստուկների անհրաժեշտ քանակության ապահովման համար կիրառվում են հետևյալ

1) եղանակները՝

ա. Արյան հավաքագրում արտագնա պայմաններում (ուսումնական հաստատություններում, աշխատանքային վայրերում, բնակավայրերում, որտեղ չկան Արյան ծառայության ստորաբաժանումներ)

բ. արյան ծառայության նոր ստորաբաժանումների ստեղծում այն մարզերում, որտեղ դրանք բացակայում են,

գ. արյան դոնորության քարոզչություն՝ մշտապես:

2) մեթոդները՝

ա. Պլազմաֆերեզի/աֆերեզի մեթոդով արյան բաղադրամասերի հավաքագրման ընդլայնում՝ պլազմաֆերեզի կենտրոնի ստեղծմամբ

բ. արյան բաղադրամասերի պահպանման ժամկետների երկարացում և խոտանի նվազեցում՝ արյան բաղադրամասերի պահպանման համար նախատեսված սարքավորումների /սառնարան, սառցարան/ վերազինման միջոցով

47. Արյան և դրա բաղադրամասերի անվտանգության և որակի ապահովման նպատակով նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) Արյան և արյան բաղադրամասերի, տեղափոխման անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է դրանց տեղափոխման կարգի մշակում և հաստատում ՀՀ կառավարության որոշմամբ:

2) Արյան և արյան բաղադրամասերի պահպանման գործընթացի կանոնակարգման և անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է համապատասխան կարգի մշակում և հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով :

3) Արյան բաղադրամասարի պետական պաշարների պահպանման կարգի մշակում և հաստատում ՀՀ կառավարության որոշմամբ:

4) Բնակչությանը մատուցվող արյունաբանական, փոխներարկումային ծառայությունների մասնագիտական որակավորման և տեխնիկա-տեխնոլոգիական պահանջներին համապատասխան մակարդակների աստիճանակարգման նպատակով, արյան ծառայությունն իրականացնող ստորաբաժանումների լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների վերանայում ՀՀ կառավարության գործող որոշման փոփոխություն:

48. Արյան դոնորության քարոզչությանն ուղղված միջոցառումներ

Կամավոր դոնորության զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևողական քարոզչություն՝ «Արյան դոնորությունը որպես մարդասիրական քայլ» գաղափարախոսությամբ: Կամավոր արյունատվության խնդրում հասարակությանը մոբիլիզացնելու նպատակով նախատեսվում է արյան կամավոր դոնորությանը նվիրված քարոզչական նյութերի (բուկլետներ, գրքույկներ) մշակում և տպագրում, ինչպես նաև արյան կամավոր դոնորությունը խրախուսող ռադիո և հեռուստահաղորդումների կազմակերպում և ժամանակակից գովազդային տեխնոլոգիաների կիրառում:

49. Փոխներարկումային բժշկական օգնության անվտանգության և որակի ապահովմանն ուղղված միջոցառումներ

1) Փոխներարկումային բժշկական օգնության իրականացման անվտանգության և որակի ապահովման նպատակով նախատեսվում է փոխներարկումային բժշկական օգնության իրականացման կարգի մշակում և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատում:

2) Փոխներարկումային բժշկական օգնության որակի ապահովման նպատակով՝ որակի վերահսկման ներքին ընթացակարգի մշակում և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատում:

50. Արյան ծառայության զարգացմանն ուղղված միջոցառումներ

Հանրապետությունում արյան ծառայության զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ այդ ծառայությունը մայրաքաղաքում և ՀՀ մարզերում զարգացնելու ուղղությամբ, ինչպես նաև ստեղծել ծառայություն այն մարզերում, որտեղ դրանք բացակայում են: Այդ նպատակին հասնելու համար նախատեսվում է Հանրապետության արյան ծառայության ստորաբաժանումների

վերանորոգում, իսկ ՀՀ Արագածոտնի և ՀՀ Գեղարքունիքի մարզերում արյան ծառայության ստորաբաժանումների /կայանների/ ստեղծում:

51. Արյան ծառայության համար անհրաժեշտ կադրերի, սարքավորումների, նորագույն մեթոդների ապահովմանն ուղղված միջոցառումներ

Որպես արյան ծառայության համար անհրաժեշտ կադրերի, սարքավորումների, նորագույն մեթոդների ապահովմանն ուղղված միջոցառումներ դիտարկվում է ծառայությունը որակյալ և արհեստավարժ կադրերով ապահովելու նպատակով մասնագետների գործուղումների կազմակերպումն արտերկիր՝ վերապատրաստման: Նախատեսվում է նաև արյան ծառայության ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի վերազինում նորագույն ժամանակակից սարքավորումներով և արյան ու արյան բաղադրամասերի տեղափոխման համար անհրաժեշտ սարքավորումների և փոխադրամիջոցների ձեռքբերում:

Նկարագրված միջոցառումների արդյունքում ակնկալվում է միջազգային փորձի ուսումնասիրման և հանրապետության արյունաբանական ծառայությունում ներդնելու արդյունքում ծառայության արդյունավետության բարձրացում, արյան բաղադրամասերի հավաքագրման և պահպանման որակի ու անվտանգության բարձրացում և դրանց տեղափոխման միջազգայնորեն ընդունված պայմանների ապահովում:

52. Արյան և դրա բաղադրամասերի շրջանառության տեղեկատվական համակարգի (արյան ռեեստրի) վարմանն ուղղված միջոցառումներ

Հանրապետության արյան ծառայության հստակ և օպերատիվ կազմակերպման նպատակով անհրաժեշտ է արյան և դրա բաղադրամասերի շրջանառության տեղեկատվական համակարգի (արյան ռեեստրի) ստեղծում: Այդ նպատակին հասնելու համար նախատեսվում է արյան և դրա բաղադրամասերի շրջանառության տեղեկատվական համակարգչային ցանցի ստեղծման տեխնիկական պահանջների և արյան դոնորների միասնական գրանցամատյանի (համակարգչային ծրագրի) մշակում: Մշակված տեխնիկական պահանջների հիման վրա նախատեսվում է ստեղծել համակարգչային ծրագրերի գնահատում, հաշվարկում, նյութատեխնիկական բազայի վերազինում և տեղեկատվական համակարգի (արյան ռեեստրի) ստեղծում:

53. Անհրաժեշտ քանակությամբ անվտանգ, արդյունավետ եւ որակյալ արյան եւ դրա բաղադրամասերի ապահովմանն ուղղված այլ միջոցառումներ

ա. Անհրաժեշտ քանակությամբ անվտանգ, արդյունավետ եւ որակյալ արյան ու բաղադրամասերի ապահովման նպատակով նախատեսվում է նաև այդ նպատակին ուղղված այլ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ գիտա-կիրառական հետազոտությունների, ծախսարդյունավետության և առկա ռեսուրսների օգտագործման վերաբերյալ գիտական հետազոտությունների իրականացում և համակարգում ներդրում, արյունաբանության և փոխներարկաբանության ոլորտում միջազգային ծրագրերի և համաշխարհային կենտրոնների հետ համագործակցություն:

բ. Կլինիկական փոխներարկաբանության զարգացման նպատակով տարբեր հիվանդությունների ժամանակ արյան և արյան բաղադրամասերի փոխներարկման ցուցումների/չափորոշիչների մշակում և ներդրում, «հեմոպոետիկ (արյունաստեղծ) բջիջների բանկի» ստեղծում, հետփոխներարկումային բարդությունների կանխարգելման միջոցառումների կատարելագործում, հետփոխներարկումային բարդությունների դեպքերի կենտրոնացված հաշվառում:

54. Արտակարգ իրավիճակներում արյան և արյան բաղադրամասերի ապահովմանն ուղղված միջոցառումներ:

Արտակարգ, ներառյալ ռազմական իրավիճակներում, հանրապետության արյան և արյան բաղադրամասերի ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել դրանց պահանջարկի և անհրաժեշտ քանակի չնվազող արյան բաղադրամասերի պաշարների հաշվարկ: Արյան բաղադրամասերի լրացուցիչ քանակների հավաքագրման, հետազոտման և պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների և նյութերի անձեռնմխելի պաշարների ստեղծման նպատակով, արտակարգ իրավիճակներում արյան ծառայության աշխատանքների կազմակերպման ծրագրի մշակում և հաստատում

«Կառավարության

որոշմամբ:

55. Արյան պատրաստուկների արտադրության զարգացմանն ուղղված միջոցառումներ

Ելնելով այն հանգամանքից, որ ժամանակակից բժշկագիտության մոտեցումների համաձայն, գնալով ավելանում է տարբեր հիվանդությունների բուժման

ընթացակարգերում արյան պատրաստուկների կիրառումը, նախատեսվում է իրականացնել արյան պատրաստուկների արտադրության վերազինում՝ միջազգային չափանիշներին համապատասխան, որի արդյունքում ակնկալվում է արյան պատրաստուկների ցանկի ընդլայնում և հանրապետության արյան պատրաստուկների պահանջարկի ինքնապահովում:

Հավելված N 2
 ՀՀ կառավարության 2012 թ.
 մարտի 1-ի նիստի N 8
 արձանագրային որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱՐՅԱՆ ԵՎ ԱՐՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Միջոցառման անվանումը	Ժամկետը	Ակնկալվող արդյունքն ըստ յուրաքանչյուր նպատակի և գործողության	Պատասխանատու	Ֆինանսական աղբյուրը
1	2	3	4	5
1. Արյան անհրաժեշտ պաշարների հավաքման մեթոդներն ու եղանակները				
1)Պլազմոֆերեզի/ աֆերեզի իրականացման կենտրոնի ստեղծում	2015-2017թթ.	Հայաստանում արյան, արյան բաղադրամասերի և արյան պատրաստուկների անհրաժեշտ քանակության ապահովում	ՀՀ առողջապահության նախարարություն	Պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ
2)Արտագնա պայմաններում արյան հավաքագրման աշխատանքային խմբերի (բրիգադների) և արյան հավաքագրում	2015-2016թթ.	Հայաստանում հավաքագրվող արյան քանակությունների ավելացում	ՀՀ առողջապահության նախարարություն	Պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ

իրականացնելու հնարավորության ստեղծում				
3) Արյան բաղադրամասերի պահպանման համար նախատեսված սարքավորումների /սառնարան, սառցարան/ վերագինում	2015-2017թթ.	Արյան բաղադրամասերի պահպանման ժամկետների երկարացում և խոտանի նվազեցում՝	ՀՀ առողջապահության նախարարություն	Պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ

2. Արյան և դրա բաղադրամասերի անվտանգության և որակի ապահովման ուղղված միջոցառումները

1) «Արյան, դրա բաղադրամասերի շրջանառության ոլորտում բժշկական փաստաթղթերի ձևերի և դրանց լրացման կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանների ընդունում	2012թ.	Արյան, դրա բաղադրամասարի շրջանառության ոլորտում կիրառվող բժշկական փաստաթղթերի կանոնակարգում	ՀՀ առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
2) «Արյան, դրա բաղադրամասերի տեղափոխման, արյան բաղադրամասերի պատրաստման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն	2012թ.	Արյան և դրա բաղադրամասերի որակի ապահովում	ՀՀ առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում

3) «Արյան բաղադրամասերի պետական պաշարների պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն	2012	Արյան և դրա բաղադրամասերի որակի ապահովում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
4) «Արյան և դրա բաղադրամասերի պաշարների հավաքման և պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի ընդունում	2012թ.	Արյան և դրա բաղադրամասերի որակի ապահովում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում

3. Արյան դոնորության քարոզչությանն ուղղված միջոցառումներ

Արյան կամավոր դոնորությանը նվիրված քարոզչական նյութերի (բուկլետներ, գրքույկներ) մշակում և տպագրում, ինչպես նաև ռադիո և հեռուստահաղորդումների կազմակերպում և ժամանակակից գովազդային տեխնոլոգիաների կիրառում:	2012-2017թթ..	Կամավոր արյունատվության խնդրում հասարակության մոբիլիզացիա և արդյունքում կամավոր արյան դոնորների քանակի ավելացում	ՀՀ առողջապահության նախարարություն, Միջազգային դոնոր կազմակերպություններ՝ (համաձայնությամբ)	ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ
---	---------------	--	--	--

4. Փոխներարկումային բժշկական օգնության անվտանգության և որակի ապահովմանն ուղղված միջոցառումներ

1) «Փոխներարկումային բժշկական օգնության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն	2012թ.	1) Փոխներարկումային բժշկական օգնության իրականացման կանոնակարգում և որակի ապահովում	ՀՀ առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
2) «Արյան, դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ որակի ապահովման հսկման ներքին ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն	2012թ.	2) Փոխներարկումային բժշկական օգնության անվտանգության և որակի ապահովմանն ուղղված միջոցառումների կարգավորում	ՀՀ առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում

5. Արյան ծառայության զարգացմանն ուղղված միջոցառումներ				
1) Հանրապետության արյան ծառայության ստորաբաժանումների վերանորոգում:	2015-2016թթ.	Հանրապետությունում առկա արյան ծառայության ստորաբաժանումների պայմանների բարելավում:	ՀՀ առողջապահության նախարարություն	Պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ

2) ՀՀ Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում արյան ծառայության ստորաբաժանումների /կայանների/ ստեղծում:	2016-2017թթ.	Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի փոխներարկումային բուժօգնություն իրականացնող բուժհաստատությունների պահանջարկի, ներառյալ արտակարգ իրավիճակներում, ապահովում:	ՀՀ առողջապահության նախարարություն	Պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ
---	--------------	--	-----------------------------------	--

6. Արյան ծառայության համար անհրաժեշտ կադրերի, սարքավորումների, նորագույն մեթոդների ապահովմանն ուղղված միջոցառումներ

1) Արյան ծառայության կադրերի վերապատրաստումների կազմակերպում արտերկրում:	2015-2017թթ.	Արյան ծառայությունը որակյալ և արհեստավարժ կադրերով ապահովելու և հանրապետությունում միջազգային փորձի ներդրման միջոցով արյան ծառայության արդյունավետության բարձրացում:	ՀՀ առողջապահության նախարարություն	Պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ
--	--------------	--	-----------------------------------	--

2) Արյան ծառայության ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի վերազինում՝ հագեցնելով նորագույն և ժամանակակից սարքավորումներով:	2015-2017թթ.	Արյան բաղադրամասերի հավաքագրման և պահպանման անվտանգության ապահովում:	ՀՀ առողջապահության նախարարություն	Պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ
3) Արյան բաղադրամասերի տեղափոխման համար սարքավորումների և փոխադրամիջոցների ձեռքբերում	2015-2017թթ.	Արյան բաղադրամասերի տեղափոխման ժամանակ անհրաժեշտ՝ պահանջվող պայմանների ապահովում:	ՀՀ առողջապահության նախարարություն	Պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ

7. Արյան և դրա բաղադրամասերի շրջանառության տեղեկատվական համակարգի (արյան ռեեստրի) վարմանն ուղղված միջոցառումներ

1) Արյան և դրա բաղադրամասերի շրջանառության տեղեկատվական համակարգչային ցանցի ստեղծման տեխնիկական պահանջների մշակում:	2012թ.	Արյան և դրա բաղադրամասերի շրջանառության տեղեկատվական համակարգի (արյան ռեեստրի) ստեղծման նախապայմանների ապահովում:	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ
---	--------	---	-----------------------------------	--

<p>2) Արյան դոնորների միասնական գրանցամատյանի (համակարգչային ծրագրի) մշակում:</p>	<p>2012-2013թթ.</p>	<p>Արյան դոնորների ցանկի հստակեցում, նրանց առողջության վերաբերյալ տեղեկատվական բանկի ստեղծում:</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն Միջազգային դոնոր կազմակերպություններ՝ (համաձայնությամբ)</p>	<p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ</p>
<p>3) Մշակված տեխնիկական պահանջների հիման վրա նյութատեխնիկական բազայի վերազինում և համակարգի (ռեեստրի) ստեղծում:</p>	<p>2015 -2017թթ.</p>	<p>Արյան և արյան բաղադրամասերի վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության գնահատում, հետփոխներարկումայի ն բարդությունների գրանցում և վերահսկում՝ արյան և արյան բաղադրամասերի շարժի բոլոր փուլերում՝ սկսած դոնորի ընտրությունից մինչև փոխներարկումը:</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>Պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ</p>
<p>4) «Արյան ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման, օգտագործման և տրամադրման կարգը</p>	<p>2012թ.</p>	<p>Արյան և արյան բաղադրամասերի վերաբերյալ առկա տեղեկատվության հավաքագրում:</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

<p>հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>		<p>Դոնորական արյան անվտանգության բարձրացում, հավաքագրված պաշարների ռացիոնալ օգտագործում, խոտանի նվազեցում, վարակակիր անձանց վաղ հայտնաբերում:</p>		
<p>8. Անհրաժեշտ քանակությամբ անվտանգ, արդյունավետ եւ որակյալ արյան եւ դրա բաղադրամասերի ապահովմանն ուղղված այլ միջոցառումներ.</p>				
<p>1)Արյան բաղադրամասերի իրական պահանջարկի գնահատման նպատակով ուսումնասիրությունների իրականացում</p>	<p>2012թ.</p>	<p>Արյան բաղադրամասերի իրական անհրաժեշտ պահանջարկի առկայությունը</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

<p>2) Գիտակիրառական հետազոտությունների, ծախսարդյունավետության և առկա ռեսուրսների օգտագործման վերաբերյալ գիտական հետազոտությունների իրականացում և համակարգում ներդրում, արյունաբանության և փոխներարկաբանության ոլորտում միջազգային ծրագրերի և համաշխարհային կենտրոնների հետ համագործակցություն:</p>	<p>2013-2017թթ.</p>	<p>Գիտա-կիրառական հետազոտությունների, իրականացման և համակարգում ներդրման ու արյունաբանության և փոխներարկաբանության ոլորտում միջազգային ծրագրերի և համաշխարհային կենտրոնների հետ համագործակցության արդյունքում հանրապետության արյան ծառայության համապատասխանեցում միջազգայնորեն ընդունված չափանիշներին:</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ</p>
--	---------------------	--	--	---

<p>3) Կլինիկական փոխներարկաբանության զարգացման նպատակով տարբեր հիվանդությունների ժամանակ արյան և արյան բաղադրամասերի փոխներարկման ցուցումների/չափորոշիչների մշակում և հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով</p>	<p>2013-2017թթ.</p>	<p>Հետփոխներարկում ային բարդությունների կանխարգելման և, հետփոխներարկում ային բարդությունները բացառելու նպատակով տարբեր հիվանդությունների ժամանակ արյան և արյան բաղադրամասերի փոխներարկման գործընթացի կազմակերպման կանոնակարգում:</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
--	---------------------	--	--	------------------------------------

9. Արտակարգ իրավիճակներում արյան և արյան բաղադրամասերի ապահովմանն ուղղված միջոցառումներ

<p>1) «Արտակարգ իրավիճակներում արյան և արյան բաղադրամասերի ապահովմանն ուղղված ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն</p>	<p>2016թ.</p>	<p>Արտակարգ իրավիճակներում արյան և արյան բաղադրամասերի ապահովում</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
--	---------------	--	---	------------------------------------

10.Արյան պատրաստուկների արտադրության զարգացմանն ուղղված միջոցառումներ				
1) Արյան պատրաստուկների արտադրության զարգացում/վերազինում:	2015-2017թթ.	Արյան պատրաստուկների ցանկի ընդլայնում և որակի բարձրացում, հանրապետության արյան պատրաստուկների պահանջարկի ինքնաապահովում:	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Պետական բյուջե ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ